Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում «ՀՀ ԿԳՄՍ նախարարության Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ

(Առաջին կիսամյակ հունվար- հունիս 2026թ. )

Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը 2026թ.-ի առաջին կիսամյակի համար նախատեսված աշխատանքներն իրականացրել է համաձայն ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված միջոցառումների պլանի և տարածքային կենտրոնի 2026թ.-ի տարեկան աշխատանքների ծրագրի: 2026թ. ընթացքում Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը իրականացրել է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում Արմավիրի մարզի Արմավիր, Բաղրամյան և Մեծամոր խոշորացված համայնքների թվով 64 հանրակրթական, 85 նախադպրոցական և 2 նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ուսումնական հաստատություններում: Կենտրոնը, հետևելով իր կանոնադրական գործառույթներին, աշխատանքները կազմակերպում է հետևյալ ուղղություններով.

1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿՁԱՊԿ) գնահատում

Տարածքային կենտրոնը տարեկան աշխատանքների ծրագրով 2026թ. առաջին կիսամյակի համար նախատեսել էր 78 սովորողի կրթական կարիքի գնահատում, սակայն իրականացվել է 93 սովորողի կրթական կարիքի գնահատում, որից 81-ը դպրոցում, իսկ 12-ը՝ ՆՈՒՀ-ում: Ցուցանիշների այս տարբերությունը պայմանավորված է սովորողի սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկմամբ/ 7,8 տարեկան երեխաների գնահատման գործընթաց/և ,բնականաբար, ստացված ավել հայտերի թվով:

2. .Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման գործընթացը նույնպես կազմակերպվել է համաձայն ՏՄԱԿ-ի տարեկան ծրագրի, որն էլ հիմնականում ներառում է երեք ուղղություններ.

- Աջակցություն սովորողին
- Աջակցություն սովորողի ծնողին
- Աջակցություն մանկավարժական աշխատողներին, ուսուցիչներին, դաստիարակներին:

2026թ. առաջին կիսամյակի համար տարեկան աշխատանքային ծրագրով նախատեսվել էր մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում թվով 381 սովորողի, իսկ հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորվել էր ծառայությունների տրամադրում թվով 359 սովորողի, սակայն փաստացի աջակցության ծառայություններ են տրամադրվել 376 սովորողի, որից 350 սովորողի՝ դպրոցում և 26 սանի՝ՆՈՒՀ-ում: Պլանավորած և փաստացի իրականացված աշխատանքների տարբերությունը պայմանավորված է առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների շարժով: Աջակցության ծառայությունների տրամադրման զգալի մասը բաժին է ընկնում սովորողներին տրամադրվող աջակցությանը, որն էլ տարածքային կենտրոնն իրականացնում է իր ռեսուրսները մաքսիմալ օգտագործելու շնորհիվ: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում կենտրոնի մասնագետները աջակցություն են տրամադրել տնային ուսուցման մեջ ընդգրկված 5 երեխաների: Ընդհանուր

առմամբ հատուկ մանկավարժի ծառայություն է ստացել 308 սովորող,որից 300-ը դպրոցում,8-ը ՆՈՒՀ-ում, լոգոպեդի ծառայություն՝ 118 սովորող, որից 102-ը դպրոցում, 16-ը ՆՈՒՀ-ում, հոգեբանի ծառայություն՝ 40 սովորող, որից 17-ը դպրոցում, 23-ը ՆՈՒՀ-ում էրգոթերապիստի ծառայություն՝ 6, տիֆլոմանկավարժի ծառայություն՝ 2, սոցիալական մանկավարժի ծառայություն՝ 19/դպրոց՝18,ՆՈՒՀ՝1/ և սուրդոմանկավարժի ծառայություն՝ 3 սովորող/դպրոց՝2,ՆՈՒՀ՝1/:

3. Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ/

Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը շատ կարևորում ու բարձր է գնահատում աշխատակիցների մասնագիտական կարողությունների և հմտությունների շարունակական զարգացումը՝ համարելով այն պրոֆեսիոնալ աշխատանքի նախադրյալ և ամուր հիմք: Այս ուղղությամբ տարիներ շարունակ տարբեր նախաձեռնություններ և աշխատանքներ են իրականացվել.

- Դասալսումներ բոլոր մասնագետների մոտ
- Փոխադարձ դասալսումներ / մասնագետները միմյանց մոտ/

Այս ամենի հիմքում դրված է եղել մեկ նպատակ՝ ընձեռել հնարավորություն շարունակական կրթության և զարգացման համար: Հաճելի և ոգևորող է նաև այն գիտակցումը, որ կատարած աշխատանքդ տեսանելի է և գնահատված: Օրեր առաջ տարածքային կենտրոնի հատուկ մանկավարժ Հասմիկ Մկրտչյանը ճանաչվեց մայիս ամսվա ,,Լավագույն հատուկ մանկավարժ,, և հուսանք, որ այդ առիթը խթանիչ ազդեցություն կունենա:

2026թ. առաջին կիսամյակի համար նախատեսվել էր 16 վերապատրաստում,սակայն հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 32 վերապատրաստում, որից 3 վերապատրաստում ՆՈՒՀ-ում և 29 վերապատրաստում դպրոցում : Պլանավորած և փաստացի իրականացված աշխատանքների տարբերությունը պայմանավորված է վերապատրաստման թեմաների անհրաժեշտությամբ և արդիականությամբ: Վերապատրաստման հիմնական թեմաները եղել են

1. Ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առողջության դեպքերի արձագանքման և ուղղորդման մեխանիզմներ
2. ԱՈՒՉՊ
3. ՈՒՀՉ
4. Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում
5. Կրթության աջակցող միջոցներ, մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ

Վերապատրաստումները կազմակերպվել են ինտերակտիվ, գործնական ուղղվածությամբ, անձնակազմը մասնակցել է մեծ ոգևորվածությամբ, ինչի մասին վկայում էին դպրոցներից եկած բազմաթիվ արձագանքները: Վերապատրաստումներին պլանավորված 491-ի փոխարեն մասնակցել է 574 անձ:

Ցուցանիշների տարբերությունը պայմանավորված է կենտրոնի կողմից սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում աշխատող ուսուցիչների դժվարությունների ու հետաքրքրությունների գնահատմամբ և այդ ուղղությամբ վերապատրաստման թեմաների

ընտրությամբ ու իրականացմամբ:

4. Խորհրդատվություն

Հաշվետու ժամանկահատվածի համար նախատեսվել էր 64 ուսումնական հաստատություններում իրականացնել խորհրդատվություններ , որից 25-ը ՆՈՒՀ-ում 37-ը դպրոցում և 2-ը ՄԿՈՒ-ում: Սակայն փաստացի խորհրդատվություններ են իրականացվել 111 ուսումնական հաստատություններում, որից 45-ը ՆՈՒՀ-ում, 64-ը դպրոցում և 2-ը ՄԿՈՒ- ում: Հաշվետու ժամանկահատվածի համար նախատեսվել էր իրականացնել 111 խորհրդատվություն, սակայն փաստացի իրականացվել է 208 խորհրդատվություն, որից 60-ը ՆՈՒՀ-ում, 145-ը դպրոցում և 3-ը ՄԿՈՒ-ում: Ցուցանիշների այս տարբերությունը պայմանավորված է իրականացրած մշտադիտարկումների թվով:

Ընդհանուր առմամբ առաջին կիսամյակի համար պլանավորվել էր, որ խորհրդատվություն կտրամադրվի 447 անձանց, որից 143 անձանց ՆՈՒՀ-ում, 293 անձանց դպրոցում և 11 անձանց ՄԿՈՒ-ում, բայց փաստացի խորհրդատվություն է ստացել 893 անձ, որից 186 անձ ՆՈՒՀ-ում, 703 անձ դպրոցում և 4 անձ ՄԿՈՒ-ում: Խորհրդատվություններ տրամադրվել են հետևյալ թեմաներով.

- ԿԱՊԿ գնահատման գործընթաց
- ԿՁԱՊԿ գնահատման գործընթաց
- Հանրակրթական ուսումնական հաստատության կրթության կազմակերպման ՄՀ աջակցություն տրամադրման գործընթաց
- Ուսումնական գործընթացի ներառականություն
- ԱՈՒՊ-ի և ԱՈՒՁՊ-ի վարում
- Ծնող-դպրոց-ՏՄԱԿ համագործակցություն

5. Մշտադիտարկում

Մշտադիտարկման ուղղությամբ 2026թ. առաջին կիսամյակի համար նախատեսվել էր 111 մշտադիտարկում, որից 45-ը ՆՈՒՀ-ում, իսկ 64-ը դպրոցում և 2-ը ՄԿՈՒ-ում: Փաստացի իրականացվել է 110 մշտադիտարկում 44-ը ՆՈՒՀ-ում , 64-ը դպրոցում և 2-ը ՄԿՈՒ-ում: Դպրոց – ՏՄԱԿ, ՆՈՒՀ-ՏՄԱԿ համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ՏՄԱԿ-ի կողմից նախապես պլանավորվել է հանրակրթական ուս. հաստատության կրթության կազմակերպման ՄՀ աջակցության տրամադրման գործընթացի մշտադիտարկումների իրականացում հետևյալ ուղղություններով, ինչն էլ իրականացրել է կիսամյակի ընթացքում.

-ԿԱՊԿ/ԿՁԱՊԿ գնահատման գործընթացի մշտադիտարկում
- ուսումնական գործընթացի ներառականություն
- ծնող-ուսուցիչ-դպրոց համագործակցություն
- մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մշտադիտարկում
- հաստատության հոգեբանի գործունեության մշտադիտարկում

6.Համագործակցություն

2026թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը շարունակում է համագործակցել Արմավիր, Մեծամոր և Բաղրամյան համայնքների համայնքապետարանների՝ Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերով բաժնի աշխատակիցների,Միասնական սոցիալական ծառայության Արմավիրի տարածքային կենտրոնի աշխատակիցների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների՝ <<Արևածագ>>,<<Հայաստանի մանուկների բարեգործական հիմնադրամ - COAF>> հետ ամենօրյա աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար: ՀՄԿ-ի մենթորական թիմի հետ հանդիպում-քննարկումներն արդեն

ավանդական բնույթ են ստացել: Տարածքային կենտրոնը բաց է իր աշխատանքներում և կարևորում է յուրաքանչյուր համագործակցություն ի նպաստ իր շահառուների:

Կենտրոնի անվանումը` «Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ

Տնօրեն` Լ. Ասատրյան

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«01 » « 07 » 2026թ